

„Հետաքննող լրագրողներ,, հասարակական կազմակերպություն
“Հետք” թերթի լրագրող Գրիշա Բալասանյանին

ՀՀ կառավարության որոշումներով Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից ՀՀ Արագածոտնի մարզպետարանին մարզում առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման ուղղությամբ 2011 թվականին հրատապ ծրագրով հատկացվել է 1334000,0 հազար, 2012 թվականին հրատապ ծրագրով՝ 853950,0 հազար դրամ:

Նշված գումարով իրականացվել են կրթական օբյեկտների հիմնանորոգման, բազմաբնակարան շենքերի տանիքների, մշակույթի տների, մանկապարտեզների, ներհամայնքային եւ միջհամայնքային ճանապարհների , խմելու ջրագծի ներքին ցանցի եւ կարգավորիչ ջրավազանի վերանորոգման, արտաքին էլեկտրամատակարարման գծի, մարզահրապարակի կառուցման եւ այլ ծրագրեր :

Շինարարական աշխատանքներն իրականացվել են մրցությամբ հաղթած „Ադոն,, , ,, Ես եւ նա,, , Գրեդշին,, , ,,Մեծ Հիմք,, , ,, Կիրֆրիլար,, , ,,Վահագն,, , ,,Յող Աստղ,, , ,, Խապարտշին,, , ,, Մարզանդ,, , ,, Աշամ,, , ,,Աբակ,, , ,, Կասկո ,, , ,,Ագարակ ,, , ,,Գևորգյան և Ներսիսյան ,, , ,,Վեռլ,, , ,,Մեդիսոն էյբլ,, շինարարական կազմակերպությունները :

2011-2012 թվականների ծրագրով նախատեսված շինարարական բոլոր աշխատանքներն ավարտվել են:

Հրատապ ծրագրով մեր մարզին հատկացված գումարներն, ընդհանուր առմամբ, բավարարում են առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման համար:

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի ՏՀՀԿՊ բաժնի պետ՝ Սաթենիկ Զորյան
21.03.2013